կողայոսի մնացեալ առանց եկեղեցւոյ իբր անտէրունչ թափառէին այսր եւ անդր ամ մի ողջոյն, և ոչ ոք էր որ ժողովէր զնոսա, և կամ փոյթ տանէր վասն նոցա։ Ապա ինքեանք միաբանեալ գտին զեկեղեցի մի Ցունաց յանուն Հրեշտակապետի 'ի ներքոյ դրան Պալատու՝ փակեալ 'ի խաւարջտին տեղւոջ 'ի մէջ Հրէից, եդին 'ի մտի 'ի ձեռս բերել զայն, բայց մեծամեծ ծախուց պէտս ունէր, և զի ոչ ունէին գլուխ և առաջնորդ զոք յորդորիչ ժողովրդեան 'ի սէր և 'ի խաղաղութիւն։ Ի նոյն աւուրս՝ եկն 'ի Կոստանդինուպոլիս Արիստակէս վարդապետ Խարբերդցի, դիմեցին առ նա քահանայք և ժողովուրդք այնոքիկ՝ հարցանել խորհուրդ 'ի նմանէ, և նա քաջալերական բանիւք խրախուսեաց զնոսա, պինդ կալ և չլքանիլ 'ի խորհրդոց, և ես ինքնին ասէ գլուխ և առաջնորդ եղէց ձեզ 'ի գլուխ տանել զգործն, և առեալ տարան զնա 'ի Խաս գիւղ, և նորա կոչեալ զժողովուրդն յորդորական բանիւք հաւանեցոյց զնոսա 'ի գործն, և ինքն ժողովեաց ոսկի և արծաթ բազում առ 'ի հոգալ զծախսն։ ապա չոքաւ առ Վէզիրն մեծ՝ և առ մեծամեծս դրան, և ծանուցեալ զբխնդիրն հաճեցոյց զմիտս նոցա։ Իբրեւ լուան զայս Ցոյնք՝ պատրաստեցան 'ի կռիւ ընդ ազգին Հայոց, առ 'ի չտալ զեկեղեցին, այլ Հայք զօրացեալ յաղթահարեցին զնոսա։ Եւ Վէզիրն մեծ Ըէճէպ Փաշայ՝ կոչեալ առ ինքն զոմանս 'ի Հայոց ետ նոցա հրովարտակ Արքունի, եւ առաքեաց ընդ նոսա զարս երկուս 'ի Նուիրակապետաց իւրոց՝ բանալ զեկեղեցին և յանձն առնել նոցա։ Եւ եղեւ ուրախութիւն մեծ Հայոց, սակայն սկսան խորհիլ՝ զի մեծամեծ ծախուց և աշխատութեանց պէտս ունէր, զի եկեղեցին էր կարի փոքր՝ մթին՝ աւերեալ և խախտեալ 'ի հիմանէ։ Եւ 'ի սմին ժամանակի անուանի էր 'ի մէջ ազգին Տիվրիկեցի Աստուածատուր՝ Պոլսէ կոչեցեալ, այր Աստուածասէր և մեծահանճար՝ որ քաղցրութեամբ բարուց իւրոց լեալ էր սիրելի յաչս մեծամեծաց դրան, եւ հաւատարիմ բարեկամ Գրիգորի Պատրիարքին Երուսաղէմի։ Սա բազում աշխատութեամբ դեգերեալ 'ի դրունս մեծամեծաց՝ եհան հրաման նորոգելոյ զեկեղեցին, և էառ զամենայն կարեւոր գրեանս։ Իբրեւ լուան զայսոսիկ կուսակիցք Կեսարացւոյն